



ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» սեպտեմբերի 2014 թ.

N 184/Մ

ք. Ստեփանակերտ

«Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ», «Տարվա լավագույն դաստիարակ» և «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթների հաղթողներին պարգևատրելու մասին

Ելնելով ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության հանրապետական մրցութային հանձնաժողովի եզրակացությունից՝ *հրամայում եմ*.

1. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի արդյունքներով՝ «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցը և պարգևատրել նախարարության պատվոգրով ու *216 հազար* դրամ գումարով:

- «Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար» անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցը և պարգևատրել նախարարության պատվոգրով ու *216 հազար* դրամ գումարով:

- «Դաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում հաղթող ճանաչել Հադրութի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոցը և պարգևատրել նախարարության պատվոգրով ու *216 հազար* դրամ գումարով:

2. «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի արդյունքներով՝ հաղթող ճանաչել Մարտունու հ. 1 միջնակարգ /հոսքային/ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Զեմնա Սամսոնի Ավետիսյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու *367,5 հազար* դրամ գումարով:

-«Ուսուցչի անձնական օրինակը որպես ուսուցման արդյունավետ կազմակերպման գործոն» անվանակարգում հաղթող ճանաչել Հադրութի միջնակարգ դպրոցի դասվար Զեմնա Լևոնի Գասպարյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու *122 հազար* դրամ գումարով:

-«Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություններ գարգացնելու կարողությունը» անվանակարգում հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ.1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անայա Համիկի Վանյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **122 հազար** դրամ գումարով:

-«Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում հաղթող ճանաչել Քարվաճառի միջնակարգ դպրոցի դասվար Աննա Արամի Աբրահամյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **122 հազար** դրամ գումարով:

3. «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել «Ստեփանակերտի հ.1 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի ավագ խմբի դաստիարակ Ժաննա Միքայելի Մարգարյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **175 հազար** դրամ գումարով:

-«Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում հաղթող ճանաչել «Հաթերքի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի ավագ խմբի դաստիարակ Արփինե Սերգեյի Սարգսյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **117 հազար** դրամ գումարով:

4. «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի զինղեկ Վլադիմիր Ահարոնի Խաչատրյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **175 հազար** դրամ գումարով:

-«Ռազմահայրենասիրական դաստիարակության լավագույն դրվածքի համար» անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցի զինղեկ Արթուր Ռուբենի Հայրապետյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **117 հազար** դրամ գումարով:

5. Պարգևատրումները կատարել հանդիսավոր կերպով Ուսուցչի օրը՝ հոկտեմբերի 5-ին:



Ս.ԱՄՐՅԱՆ